




ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ANNUAL REPORT

- Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 4.0%-ով և կազմել 419,489 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 11.7%:
- Ընդհանուր պարտավորությունները 2023թ.-ի համեմատ աճել են 1.6%-ով և կազմել 349,659 մլն ՀՀ դրամ, իսկ 2014թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 11.6%:
- Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 8.8%-ով և կազմել 218,114 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 12.7%:
- Արժեթղթերում ներդրումները նվազել են 2.0%-ով և կազմել 52,977 մլն ՀՀ դրամ: 2014թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 13.1%:
- Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 31.5%-ով և կազմել 147,093 մլն ՀՀ դրամ, իսկ 2014թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 18.4%: Ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 27.5%-ով, իսկ իրավաբանական անձանց՝ 53.9%-ով: Ցպահանջ հաշիվների մնացորդները նվազել են 12.7%-ով և կազմել 143,075 մլն ՀՀ դրամ:
- Բանկի զուտ տոկոսային մարժան 2023թ.-ի համեմատ աճել է 0.7 տոկոսային կետով և կազմել 5.2%:
- Բանկի զուտ շահույթը կազմել է 12,191 մլն ՀՀ դրամ՝ 2023թ.-ի համեմատ ավելանալով 12.6%-ով:
- Բանկի ընդհանուր կապիտալը 2023թ.-ի համեմատ աճել է 17.7%-ով և կազմել 69,830 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.4%:
- 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է թվով 50 մասնաճյուղ:





Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ, գործընկերներ,

Ինչպես նախորդ մի քանի տարիներին, 2024թ.-ին ևս մենք կանգնած էինք անորոշությունների, բարդությունների առաջ: Այս փոփոխվող միջավայրին և տեխնոլոգիայի մարտահրավերներին հարմարվելով և զուգահեռաբար պատասխանելով՝ մենք անխափանորեն մատուցեցինք մեզնից ակնկալվող ծառայությունները, փորձեցինք լավագույնս հոգատար լինել հաճախորդների նկատմամբ, նոր լուծումներ և համարժեք առաջարկներ գտնել՝ օրվա հրամայականից ելնելով:

2024թ.-ը ոչ միայն հետագա աճի և լավ ցուցանիշների, այլև մեր գործընկերների, հաճախորդների հետ հարաբերություններն էլ ավելի ամրապնդելու, աշխատակիցների նկատմամբ առավել հոգատար լինելու տարի էր:

Նախորդ տարվա ընթացքում մեր թվային ծառայություններն ընդլայնվեցին, հետևողականորեն ներմուծեցինք թվային մտածողություն և մշակույթ, որը մեզ թույլ կտա մրցունակ մնալ նաև ապագայում: Նոր ջանքեր ենք ներդրել կորպորատիվ մշակույթն ավելի թափանցիկ, հաճախորդակենտրոն դարձնելու ուղղությամբ:

Հավատացած եմ, որ 2024թ.-ին ևս մեկ քայլ արեցինք մեր հանդեպ ցուցաբերված վստահությունն արդարացնելու ուղղությամբ:

Լիահույս եմ, որ մենք ունենք թե՛ կամք, թե՛ հանձնառություն, թե՛ եռանդ նախագծերը շարունակելու, նպաստելու Բանկի հետագա բարգավաճմանը, մեր հաճախորդների բարեկեցությանը և մեր տնտեսության զարգացմանը:

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

Չնայած այն բոլոր մարտահրավերներին, որոնք 2022 թվականից սկսած էական ազդեցություն և հետևանքներ կարող էին ունենալ բանկային համակարգի վրա, 2024 թվականը ԱրարատԲանկի համար շարունակական հաջողությունների տարի էր՝ ինչպես նոր ինստիտուցիոնալ գործակցությունների, այնպես էլ ձեռքբերումների տեսանկյունից:

2024 թվականը ԱրարատԲանկի համար շարունակական հաջողությունների տարի էր՝ ինչպես նոր ինստիտուցիոնալ գործակցությունների, այնպես էլ ձեռքբերումների տեսանկյունից:

Հատկապես գոհացուցիչ են Բանկի ռազմավարության արդյունավետությունը և կայուն զարգացումը փաստող միջազգային գնահատականները: Բանկը FMO Հոլանդական զարգացման բանկի հետ ստորագրել է 25 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր, որի համաձայն վարկային միջոցների 40%-ը նախանշված է կանաչ ծրագրերի, իսկ 60%-ը՝ սոցիալական անհավասարության կրճատմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորմանը: Ընդլայնել ենք համագործակցությունը Blue Orchard գլոբալ միկրոֆինանսավորման և responsAbility գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամների հետ՝ յուրաքանչյուրի հետ ստորագրելով 5 մլն ԱՄՆ դոլարի պայմանագրեր: Ամրապնդել ենք համագործակցությունը ՎԶԵԲ-ի հետ՝ ստորագրելով երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրը 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Պայմանագրերից մեկը պարունակում է հատուկ բաղադրիչ՝ ուղղված 2020-2023 թվականներին տեղահանված հայերի աջակցությանը:



Միջազգային գործընկերության ընդլայնումն ու մեր ռազմավարական առաջնահերթությունների ուղղությամբ աշխատանքի արդյունքն աննկատ չի մնացել. արժանացել ենք տարաբնույթ միջազգային մրցանակների: ՎԶԵԲ-ի 33-րդ տարեկան ժողովին արժանացանք Climate Practices and Transition Planning Programme Armenia մրցանակի: Ria Money Transfer համակարգի կողմից պարգևատրվեցինք «Բիզնեսի ընդլայնման նվաճումների» մրցանակով: Բրիտանական The Global Banking and Finance Review հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել ենք «Հայաստանի լավագույն բանկ ներդրողների հետ հարաբերություններում»: Բանկն արժանացել է նաև ԱյՍԻՍԻ Հայաստանի ազգային կոմիտեի կողմից կազմակերպված «Նվիրում» մրցանակաբաշխության «Տարվա խոշոր ԿՍՊ ընկերություն» գլխավոր մրցանակին: Այս ճանաչումը ևս մեկ անգամ վկայում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և կայուն զարգացման սկզբունքներին մեր նվիրվածության մասին:

Ֆինանսական տեսանկյունից 2024 թվականը բերել է նշանակալի արդյունքներ: Բանկի ակտիվները կազմել են 419,489 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.0%-ով կամ 16.0 մլրդ ՀՀ դրամով: Նշանակալի է, որ վերջին տասը տարիների ընթացքում մեր ակտիվների միջին տարեկան աճի տեմպը կազմել է 11.7%: Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը հասել է 85.8%-ի:

Հաճախորդներին տրված վարկերի մնացորդը տարեվերջի դրությամբ կազմել է 218,114 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 8.8%-ով: Վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 52.0%-ը: Բոլոր վարկատեսակների գծով գրանցվել է ծավալների աճ՝ մանրածախ վարկերն ավելացել են 16.1%-ով, իսկ կորպորատիվ վարկերը՝ 0.7%-ով:

Բանկի պարտավորությունները կազմել են 349,659 մլն ՀՀ դրամ՝ աճելով 1.6%-ով: Ժամկետային ավանդները հասել են 147,093 մլն ՀՀ դրամի և 2023թ.-ի համեմատ ավելացել են 31.5%-ով:

Բանկի սեփական կապիտալը կազմել է 69,830 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.7%-ով: Մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը հասել է 37,276 ՀՀ դրամի:

Բանկի զուտ շահույթը կազմել է 12,191 մլն ՀՀ դրամ՝ 2023թ.-ի համեմատ աճելով 12.6%-ով:

2024թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում: 2024թ.-ի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 52,977 մլն ՀՀ դրամ: Վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.1%:

Բանկն ակտիվորեն մասնակցել է նաև «կանաչ» ֆինանսավորման ծրագրերին: GGF ֆոնդի և IPC միջազգային խորհրդատվական կազմակերպության հետ համատեղ մեկնարկեց «կանաչ» վարկավորման գործընթացների ներդրման հետ կապված տեխնիկական աջակցության ծրագիրը:


Շրջելով 2024թ.-ի էջը և մուտք գործելով 2025թ.՝ նպատակադրված ենք շարունակելու կայուն գործունեությունը՝ համադրելով ժամանակակից տեխնոլոգիական լուծումները և բանկային ծառայությունների բարձր չափանիշները, ընդլայնելու մեր ներկայությունը շուկայում, նորարարական ծրագրերի ներդրմամբ բարձրացնելու ծառայությունների որակը և հասանելիությունը, ինչպես նաև ակտիվորեն մասնակցելու երկրի տնտեսական և սոցիալական զարգացմանը: Շնորհակալություն վստահության համար:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ու FMO Հոլանդական զարգացման բանկի միջև կնքվել է 25 մլն ԱՄՆ դոլարի միջոցների ներգրավման պայմանագիր, որի համաձայն վարկային միջոցների 40%-ը նախանշված է կանաչ ծրագրերի, իսկ 60%-ը՝ սոցիալական անհավասարության կրճատմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորմանը:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ 5 մլն ԱՄՆ դոլար է ներգրավել Blue Orchard գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամից և ևս 5 մլն ԱՄՆ դոլար՝ responsAbility գլոբալ միկրոֆինանսավորման հիմնադրամից:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ և ՎՋԵԲ-ի միջև ստորագրվել է երկու պայմանագիր՝ յուրաքանչյուրը 5 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Պայմանագրերից մեկը պարունակում է հատուկ բաղադրիչ՝ ուղղված 2020-2023 թվականներին տեղահանված հայերի աջակցությանը:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ՎՋԵԲ-ի 33-րդ տարեկան ժողովին արժանացել է [Climate Practices and Transition Planning Programme Armenia](#) մրցանակի:
- ԱրարատԲանկը՝ RIA Money Transfer համակարգի «Տարվա գործընկեր Հայաստանում»:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ Բրիտանական [«The Global Banking and Finance Review»](#) հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկը ներդրողների հետ հարաբերություններում:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ AMX ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է 5 մրցանակի՝
 - *կորպորատիվ պարտատուների շուկայում լավագույն տեղաբաշխող*
 - *դեպոզիտար համակարգի լավագույն համագործակցող անդամ*
 - *դեպոզիտար համակարգի ամենաառաջադեմ անդամ:*
- Երևանում առաջին անգամ անցկացված Visa Cashless Forum-ի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ արժանացել է [«Ամուր գործակցություն»](#) հեղինակավոր մրցանակին տարիների ընթացքում նոր նախագծերի ներդրման և իրականացման շրջանակում Visa-ի հետ սերտ և արդյունավետ համագործակցության համար:

2024թ. ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության և ֆինանսական համակարգի համար բավականին բարենպաստ տարի էր աճի և բարձր ֆինանսական արդյունքների ապահովման տեսանկյունից: Աստիճանաբար կայունացող, թեև երկարաժամկետ կայուն մակարդակներից դեռևս բարձր պահպանվող տնտեսական աճի տեմպերը, արտաքին առևտրի մեծ ծավալները և ներքին բարձր պահանջարկը կրկին հիմնական գործոններն էին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ համար 2024թ. կրկին բարենպաստ էր ռազմավարական ուղղություններով ներդրումների աճի և չափազանց բարձր շահութաբերության ցուցանիշների տեսանկյունից:


2024թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 419,489 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 4.0%-ով կամ 16.0 մլրդ ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 11.7%:

Ընդհանուր ակտիվներ, մլն. ՀՀ դրամ




Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 85.8%

31.12.2024



- Հաճախորդներին տրված վարկեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Ներդրումային արժեթղթեր
- Դրամական միջոցներ
- Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
- Այլ ակտիվներ


31.12.2023




(մլն ՀՀ դրամ)

	2024	2023	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	419,489	403,496	15,993	3.96%
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	359,894	347,959	11,935	3.43%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխադրվածություններ	218,114	200,539	17,574	8.76%
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	88,803	93,334	-4,530	-4.85%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	46,643	45,258	1,385	3.06%
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	6,335	8,828	-2,494	-28.25%
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	85.79%	86.24%		

31.12.2024



31.12.2023




Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաճախորդներին տրված վարկերը 2023թ.-ի համեմատ ավելացել են 8.8%-ով, իսկ Պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և Ներդրումային արժեթղթերը նվազել են 4.9%-ով և 2.0 %-ով համապատասխանաբար՝ նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը գրեթե պահպանվել է նույն մակարդակում՝ կազմելով 85.8% և կրելով կառուցվածքային փոփոխություն վարկերի ուղղությամբ:

2024թ.-ի ընթացքում Բանկին հաջողվեց վարկային պորտֆելի զգալի աճ ապահովել՝ հավատարիմ մնալով իր առաջնահերթություններին: Այս ուղղությամբ 2024թ.-ին իրականացված գործընթացները ներկայացված են ստորև.

- Բանկը 2021 թվականին FMO Հոլանդական զարգացման բանկից ստացել է 20 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով երաշխիքային ծածկույթ («NASIRA» ծրագրի շրջանակներում), որի ներքո հատուկ թիրախային խմբերի համար նախատեսված բիզնես վարկերի տրամադրման վերջնաժամկետ էր սահմանվել 2025 թվականի օգոստոս ամիսը, սակայն, մրցունակ պայմաններով վարկային գործիքների և արդյունավետ աշխատանքի շնորհիվ, 2024 թվականի սկզբին սահմանաչափը գրեթե ամբողջությամբ օգտագործված էր:
- 2024 թվականին Բանկը որոշում կայացրեց ինստիտուցիոնալ մոտեցում ցուցաբերել «կանաչ» վարկավորման գործընթացին, որի արդյունքում GGF ֆոնդի և IPC միջազգային խորհրդատվական կազմակերպության հետ համատեղ Բանկում մեկնարկեց «կանաչ» վարկավորման գործընթացների ներդրման հետ կապված տեխնիկական աջակցության ծրագիրը:


2024թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 218,114 մլն ՀՀ դրամ: 2023թ.-ի համեմատ ցուցանիշի ավելացումը կազմել է 8.8% կամ 17,574 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.7%: 2024թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 52.0%-ը՝ նախորդ տարվա 49.7 %-ի դիմաց, ինչը պայմանավորված է վարկավորման բավականին բարձր տեմպերի հետ:

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ




Բանկի կողմից տրամադրված բոլոր վարկատեսակների գծով արձանագրվել է ծավալների ավելացում՝ հիփոթեքային վարկերի ծավալը 2024թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 35,526 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 30,708 մլն ՀՀ դրամի դիմաց, աճը՝ 15.7%: Բանկի կողմից տրամադրված գրավով ապահովված սպառողական վարկերը 2023թ.-ի համեմատ աճել են 7,812 մլն ՀՀ դրամով կամ 17.3%-ով և 2024թ.-ի վերջի դրությամբ կազմել են 53,048 մլն ՀՀ դրամ: 2024թ.-ին աճել են նաև գյուղատնտեսական վարկերը (12.7%-ով), այլ սպառողական վարկերը (68.2%-ով), ոսկու գրավով և անգրավ սպառողական վարկերը՝ համապատասխանաբար 4.7% և 12.9%-ով: Կորպորատիվ հաճախորդների վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 105,524 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 0.7%-ով:



**Տրամադրված վարկերի կառուցվածք
31.12.2024**



**Տրամադրված վարկերի կառուցվածք
31.12.2023**




2024թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը 2023թ.-ի համեմատ փոփոխվել է, որտեղ ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 3.6%-ով և կազմել 52.1%:




2024թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում: 2024թ.-ի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 52,977 մլն ՀՀ դրամ: 2023թ.-ի համեմատ ցուցանիշը նվազել է 2.0%-ով կամ 1,109 մլն ՀՀ դրամով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.1%:


Ներդրումային արժեթղթեր, մլն ՀՀ դրամ



Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերի տեսակարար կշիռն ավելացել է 8.6%-ով և կազմել՝ 75.0%:




- ՀՀ պետական պարտատոմսեր
- Ոչ պետական պարտատոմսեր
- Կորպորատիվ բաժնետոմսեր



2024թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 349,659 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.6%-ով կամ 5,466 մլն ՀՀ դրամով:


Ընդհանուր պարտավորություններ, մլն. ՀՀ դրամ




Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների ժամկետային ավանդների ավելացմամբ:

Տարեվերջին Բանկի կողմից Միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 31,626 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 9.0%-ը: 2023թ.-ի համեմատ ներգրավված միջոցները նվազել են 15.2%-ով: Վերոնշյալը միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձր մակարդակի արդյունք է: Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման բանկ (FMO), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (EFSE), Սևծովյան առևտրի և զարգացման բանկ (BSTDB), Incofin Investment Management, Blue Orchard, Եվրասիական զարգացման բանկ (EDB), SYMBIOTICS SICAV ընկերություն և այլ ֆինանսական կազմակերպություններ:

Միջազգային ներգրավումներ, մլն ՀՀ դրամ



31.12.2024



Ժամկետային ավանդներ

Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ

Միջազգային և այլ ֆին. կազմ. ստացված միջոցներ


Այլ պարտավորություններ

Բանկի կողմից թողարկված արժեթղթեր

Պարտավորություններ բանկերի նկատմամբ


Ստորադաս փոխառություն

31.12.2023




Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 147,093 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 42.1%-ը և 2023թ.-ի համեմատ ավելացել են 31.5%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 18.4%: Մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն աճել են 27.5%-ով, իսկ իրավաբանական անձանց ավանդները՝ 53.9%-ով:

Ժամկետային ավանդներ, մլն ՀՀ դրամ




31.12.2024




■ Իրավաբանական
անձինք
■ Ֆիզիկական անձինք

31.12.2023




Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 143,075 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 40.9%-ը: 2023թ.-ի համեմատ ցուցանիշը նվազել է 12.7%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 14.0%: Ֆիզիկական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 61.7%, իսկ իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը՝ 38.3%:

Ընթացիկ հաշիվներ եւ ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ




2024թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 69,830 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 10,526 մլն ՀՀ դրամով կամ 17.7%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է շահաբաժինների վճարում: Ընդհանուր կապիտալի ցուցանիշի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2024թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 12,191 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով: Կապիտալի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև արժեթղթերի վերագնահատման պահուստների փոփոխությունը:



2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 9,366,725 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,873,375 սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2024թ.-ի ընդհանուր կապիտալի փոփոխության արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 37,276 ՀՀ դրամ՝ 2023թ.-ի 31,657 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 17.7%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 35,011 մլն ՀՀ դրամ՝ ավելանալով 21.9%-ով կամ 6,289 մլն ՀՀ դրամով:


Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է Հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 4,182 մլն ՀՀ դրամ կամ 19.9% աճով, որը կազմել է ընդհանուր տոկոսային եկամուտների 71.8%-ը՝ նախորդ տարվա 73.0 %-ի դիմաց:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 7.8% նախորդ տարվա 6.3%-ի փոխարեն՝ արդյունքում գեներացնելով 2,748 մլն ՀՀ դրամի եկամուտ:

Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 3.1%-ով և կազմել 4,958 մլն ՀՀ դրամ, իսկ դրանց մասնաբաժինը ընդհանուր տոկոսային եկամուտների մեջ կազմել է 14.2%՝ նախորդ տարվա 16.7 %-ի փոխարեն:


Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև.

31.12.2024



- Հաճախորդներին տրված վարկերից
- Արժեթղթերի պորտֆելից
- Բանկերում և այլ ֆին. կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից
- Ռեպո պայմանագրերից
- Այլ

31.12.2023



Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 14,282 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 20.1%-ով կամ 2,391 մլն ՀՀ դրամով:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2024թ.-ին կազմել են 9,846 մլն ՀՀ դրամ, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային ծախսերում կազմել է 68.9%: 2023թ. համեմատ ծախսերն ավելացել են 35.4%-ով, ինչն օրինաչափ է պորտֆելների աճին զուգահեռ:



Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 392 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից ավել լինելով 42.3%-ով:

2023թ.-ի համեմատ նվազել է բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից նեգրավված ավանդների և այլ փոխառու միջոցների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 32.5 %-ի դիմաց կազմելով 25.0%: Նշված ծախսերը կրճատվել են 7.7%-ով կամ 300 մլն ՀՀ դրամով, ինչը պարտավորությունների կառուցվածքային փոփոխության արդյունք է:

2024թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 20,730 մլն ՀՀ դրամ՝ 2023թ. համեմատ ավելանալով 3,897 մլն ՀՀ դրամով կամ 23.2%-ով:

Բանկի զուտ տոկոսային մարժան 2023թ.-ի համեմատ ավելացել է 0.7 տոկոսային կետով և կազմել 5.2%:

31.12.2023



Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 5,294 մլն ՀՀ դրամ՝ 2023թ.-ի համեմատ աճելով 4.2%-ով կամ մոտ 211 մլն ՀՀ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 2,873 մլն ՀՀ դրամ՝ 2023թ.-ի համեմատ աճելով 30.6%-ով կամ 674 մլն ՀՀ դրամով:


Արդյունքում 2024թ.-ին Բանկի զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 2,421 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով 2023թ.-ի համապատասխան ցուցանիշից 463 մլն ՀՀ դրամով կամ 16.0%-ով: 2023թ.-ի համեմատ նվազել են վճարային քարտերով գործառնությունների գծով ստացված զուտ միջնորդավճարները՝ մոտ 21.4%-ով և նվազել են դրամական փոխանցումներից ստացված միջնորդավճարները՝ 28.8%-ով:

2024թ.-ի ընթացքում Բանկն արտարժույթային գործառնություններից գեներացրել է 4,905 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ: 2023թ.-ի համապատասխան ցուցանիշից եկամուտները նվազել են 393 մլն ՀՀ դրամով կամ 7.4%-ով:


Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 11,959 մլն ՀՀ դրամ 2023թ.-ի 10,619 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 12.6% տարբերությունը պայմանավորված է անձնակազմի գծով իրականացված ծախսերի աճով, որոնք 2023թ.-ի համեմատ ավելացել են 593 մլն ՀՀ դրամով:

2024թ.-ին Բանկի զուտ շահույթը կազմել է 12,191 մլն ՀՀ դրամ:

Բանկի շահույթ, մլն ՀՀ դրամ



Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 6,508 ՀՀ դրամ:

2024թ.-ին Բանկի ռազմավարական առաջնահերթություն համարվող թվային բանկային համակարգը ապահովեց իր շարունակական զարգացումը: Ուշադրության կենտրոնում էր մասնավորապես AraratMobile բջջային հավելվածի կատարելագործումը: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև:

- Նոր ֆունկցիոնալների ներդնում՝
 - ✓ ԱՊՊԱ պայմանագրերի կնքման համար գործընկերների ցանկի ընդլայնում,
 - ✓ դոմոֆոնի վճարներ
 - ✓ ԴԱՀԿ-ի վճարման հնարավորություն,
 - ✓ VISA քարտատեսակների բաժանորդագրությունների կառավարում (VSPS)
 - ✓ քարտապանի անուն ազգանունի արտացոլում քարտից քարտ փոխանցումների ժամանակ
 - ✓ քարտի ՊԻՆ կոդի ստեղծման և փոփոխության հնարավորություն
 - ✓ կենսաթոշակային ֆոնդերի փոփոխության հնարավորություն
 - ✓ հավելվածի օգտատերերի ապաբլոկավորման հնարավորություն
- AraratMobile հավելվածի օգտատերերի թվի զգալի աճ՝ 36%:

2024թ.-ին Բանկը, որպես ներդրումային ծառայությունների մատուցման շուկայի առաջատարներից մեկը, շարունակեց ուշադրության կենտրոնում պահել ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտը և մեխանիզմներ կիրառեց մատուցվող ծառայությունների (պահառություն, բրոքերիջ, տեղաբաշխում, արժեթղթերով գործարքների հետ կապված վերլուծությունների կազմում, հրապարակում) որակի բարելավման նպատակով: Ստորև բերված են այս ուղղությամբ իրականացված միջոցառումները.

- ARARATBANK Trading Platform ԱՀ-ի բաժանորդագրություն ունեցող անձանց ֆինանսական շուկաների ամփոփ շաբաթական ակնարկի պատրաստում և ներկայացում երկլեզու տարբերակով (հայերեն և անգլերեն),
- ARARATBANK Trading Platform ԱՀ-ի բաժանորդագրություն ունեցող անձանց օրական կտրվածքով հեղինակավոր ակտիվների կառավարիչների կողմից կառավարվող բորսայական ներդրումային ֆոնդերի (ETF) տեղեկատվական թերթիկների ներկայացում,
- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի պատվերով վերջինիս պարտատոմսերի բորսայական տեղաբաշխում,
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 27-րդ և 28-րդ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման համար ծրագրային ազդագրի պատրաստում և 2 տրանշի պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացի կազմակերպում:

Հաճախորդների գոհունակությունը Բանկի առաջնային նպատակներից է՝ հիմնված մարդակենտրոն սպասարկման, բանկային պրոդուկտների բազմազանության, մրցունակ սակագների, գործընկերության և պատասխանատվության վրա: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի, սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում:


Դեռևս 2020թ.-ին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ 2021-2024թ.-ին Բանկը փորձել է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար և կնպաստեն հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով սպասարկող անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:


Մարտահրավերներով ու խնդիրներով լի հաշվետու տարին հաճախորդների հավատարմության մակարդակի պահպանման լավագույն ցուցիչն է: Զգուշավոր և գրագետ քաղաքականության արդյունքում Բանկին հաջողվել է ապահովել վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվ հաճախորդների թվաքանակի 9.3% աճ, որտեղ ֆիզիկական անձանց բաժին է ընկել 95.9%, իրավաբանական անձ հաճախորդներին՝ 4.1%: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում առցանց տիրույթում անկանխիկ գործարքների քանակի ավելացումը փաստում է նաև AraratMobile բջջային հավելվածի արդյունավետության մասին:

Թեժ մրցակցության պայմաններում 2024թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2023թ.-ի համեմատ ավելացրել հաճախորդների թիվը:

31.12.2024



31.12.2023



Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է: Ներքին հսկողական համակարգն ուղղված է ապահովելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ապահովման, ինչպես նաև թվային փոխակերպման գործընթացների գնահատման ու շարունակական բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման վրա հիմնված Բանկի ներքին աուդիտի, ներառյալ SS աուդիտի, աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության գործառույթ:

Ներքին աուդիտի գործառույթը, որը ներդրվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան, ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի կողմից աշխատանքային ծրագրերի կազմման գործընթացում հիմնականում ստուգումների շեշտը դրվում է Բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացների, SS համակարգերի, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա:

Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով Ներքին աուդիտի առաջարկությունների և եզրակացությունների հիման վրա ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ներքին հսկողական համակարգը գործում է շուկայում արդի զարգացող պահանջներին համահունչ: Համապատասխանության ապահովման խումբը օժանդակում է գործարար գործընթացների իրականացմանը օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է էթիկական կորպորատիվ մշակույթի պահպանմանը՝ պարբերաբար կազմակերպելով Բանկի կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների, ինչպես նաև մեծ պատասխանատվություն կրող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարներ:

Իրականացվում է Բանկում գործող պայմանագրերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության և ավտոմատացման գործընթացի վերահսկողություն:

Առկա գործընթացների ռիսկերի նվազեցման, արդիականացման և բարելավման նպատակով իրականացվում են գործառնությունների ընթացիկ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Համապատասխանության ապահովման խմբի կողմից ակտիվ համագործակցություն է իրականացվում բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Համապատասխանության ապահովման խումբը մասնակցում է գործառնական ռիսկերի կառավարման գործառույթներին և քննարկումներին, ներկայացնում համապատասխան լուծումների առաջարկություններ: Այն հնարավորություն է տալիս ընթացքում բացահայտել, գնահատել առկա խնդիրները և մշակել անհրաժեշտ լուծումներ, որոնք ուղղված են գործող մեխանիզմների բարելավմանը և ընթացիկ հսկողության մեխանիզմների անընդհատության սկզբունքով գործունեության ապահովմանը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են օպտիմալացման առաջարկություններ:

Վերջին ժամանակներում բանկն առերեսվել է ինչպես արտաքին միջավայրից եկող, այնպես էլ ՀՀ տնտեսությունում և բանկային համակարգում առկա բազում մարտահրավերների հետ: Բանկը կարողացել է անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակում պահպանել իր մրցակցային առավելությունները և նախորդ տարվա ընթացքում ապահովել շահույթի բարձր մակարդակ: Ենթադրվում է, որ կապահպանվի առկա աշխարհաքաղաքական վիճակը և դրանից բխող ֆինանսական շուկաների անկայունությունը, իսկ առաջիկա տարիներին սպասվող ռիսկերին դիմակայելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևողական և արդյունավետ աշխատանք բոլոր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Բանկը պլանավորում է պահպանել իրացվելիության, գործառնական, վարկային և շուկայական ռիսկերի ցածր մակարդակը: Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկում ամենօրյա կտրվածքով իրականացվում է Բանկի կողմից սահմանված իրացվելիության ներքին ցուցանիշների հսկողություն: Ցուցանիշների խախտման դեպքում անմիջապես վերլուծվում են խախտման պատճառները և իրականացվում են համապատասխան միջոցառումներ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Շուկայական ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկը սահմանել է արտարժույթային դիրքերի սահմանաչափեր, տոկոսադրույքի կառավարման նպատակով իրականացվում են ժամկետայնության ճեղքվածքի վերլուծություններ, տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների վերլուծություններ, պարբերաբար մոնիտորինգներ են իրականացվում շուկայում տոկոսադրույքների փոփոխությունների վերաբերյալ:

Աշխարհաքաղաքական միջավայրի կտրուկ փոփոխությունների և ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ Բանկի կողմից իրականացվում են սթրես թեստեր՝ սպասվող հնարավոր կորուստները կանխատեսելու և դրանք նվազագույնի հասցնելու նպատակով:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումների և վարկային պորտֆելի որակի վատթարացման սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն, միաժամանակ, ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտների վարկերի վերադարձման ուղղությամբ:

ՀՀ ֆինանսական համակարգի մրցակցությանը դիմակայելու, շուկայում կայուն դիրքեր պահպանելու և շահութաբերության ցուցանիշների բարելավման նպատակով Բանկը նախատեսում է ավելի արդյունավետ դարձնել վարկային ռիսկի կառավարման առկա քաղաքականությունը: Բանկը շարունակում է աշխատանքները «Ֆինանսական գործիքներ» ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 9-ին համապատասխան ֆինանսական ակտիվների դասակարգման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ:

Բանկի ռիսկի ախորժակով առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով Բանկի գործունեության բնականոն ընթացքին և ակտիվների արդյունավետ կառավարմանը: Բանկի գործող ռիսկի ախորժակն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

- Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում շուկային իրավիճակներում:
- Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:
- Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածներում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:
- Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքը ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես մոդելին:
- Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:
- Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
- Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:
- Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:
- Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:

- Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
- Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:
- Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:
- Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:
- Շուկայական ռիսկերի կառավարման տեսանկյունից Բանկում իրականացվում է տոկոսադրույքի և արտարժույթային ռիսկերի կառավարում: Նշված ռիսկերի բացահայտման, գնահատման նպատակով Բանկում իրականացվում են զգայունության վերլուծություններ, արտարժույթային դիրքերի հաշվարկներ, սթրես թեստեր: Բանկը նախատեսում է առաջիկա տարում ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և կատարելագործել շուկայական ռիսկերի կառավարման համար կիրառվող մոդելները:
- Գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով յուրաքանչյուր շաբաթ իրականացվում է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից Գործառնական ռիսկերի կառավարման էլեկտրոնային շտեմարանի միջոցով գրանցված միջադեպերի վերլուծություն: Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի՝ յուրաքանչյուր շաբաթ տեղի ունեցող նիստերի ժամանակ տրվում են հանձնարարականներ համապատասխան ստորաբաժանումներին խնդիրների լուծման և գործառնական ռիսկերի նվազեցման նպատակով: Յուրաքանչյուր եռամսյակ իրականացվում է նաև գործառնական ռիսկի հաշվարկ: Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը և նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:



AraratBank



(+374)10 59 23 23

Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

info@araratbank.am | araratbank.am